Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Աշոտ Ղահրամանյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ Արմավիրի մարզպետ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Իտալիայի Հանրապետության Վենետո նահանգ 2018 թվականի փետրվարի 19-21-ը
4.	Հրավիրող կողմը	Իտալիայի Հանրապետության Վենետոյի նահանգապետ
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Իտալիայի Հանրապետության Վենետո նահանգի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի միջև փոխհամագործակցության հուշագրի ստորագրում
6.	Քննարկված թեմաները	Փոխշահավետ համագործակցության ուղիները և դրանց իրականացման եղանակներն ու ժամկետները
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	2018 թվականի փետրվարի 19-ին Իտալիայի Հանրապետության Վենետոյի նահանգապետարանում ստորագրվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի և Վենետոյի նահանգի միջև համագործակցության համաձայնագիր: Արարողությունը տեղի ունեցավ Վենետոյի նահանգապետի հանդիսությունների սրահում, ուր հայկական պատվիրակությանն ընդունեց նահանգապետ Լուկա Զայան՝ ծառայությունների ղեկավարների մասնակցությամբ: Հրավիրվել էին նաև տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ և լրագրողներ: Երկկողմ համաձայնագիրը նախատեսում է փոխադարձ շահավետ համագործակցություն ծավալել մշակույթի, տնտեսության, կրթության, սոցիալական, սպորտի և տուրիզմի ոլորտներում, ինչպես նաև համագործակցության ձևեր գտնել երկու տարածքային միավորների հանրային հաստատությունների, ոչ կառավարչական կազմակերպությունների և ձեռնարկատիրական կազմակերպությունների միջև: 2018 թվականի փետրվարի 20-ին հանդիպում տեղի ունեցավ Վենետոյի նահանգի պաշտոնատար անձանց, գործարարների և Արմավիրի մարզի պատվիրակության միջև: Հանդիպման շրջանակներում երկու կողմերի ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց շրջանների տնտեսական և ներդրումային հնարավորությունները: Նույն օրը Արմավիրի մարզի պատվիրակությունն այցելեց Սուրբ Ղազար կղզում գտնվող Մխիթարյան Միաբանության վանքային համալիր և ծանոթացավ հայկական մշակույթի գանձերին և դրանց հանրությանը ներկայացման ու քարոզման հնարավորություններին: 2018 թվականի փետրվարի 21-ին հայկական պատվիրակությունն այցելեց Վենետո նահանգի քարի վերամշակման ձեռնարկություն,

		որտեղ ծանոթացավ ժամանակակից սարքավորումներով հագեցված գործարանի տեխնիկական հնարավորություններին և քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղիները: Այնուհետև պատվիրակությունն այցելեց հայ գործարարի կողմից ստեղծված և ղեկավարվող կահույքի արտադրության գործարան, որտեղ քննարկվեցին նրանց կողմից Արմավիրի մարզում տնտեսական գործունեություն իրականացնելու հնարավորությունները:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Վենետոյի նահանգապետը և ՀՀ Արմավիրի մարզպետը ստորագրեցին փոխհամագործակցության հուշագիր: Ստորագրման արարողությունից հետո տեղի ունեցած աշխատանքային քննարկումների ընթացքում կողմերի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկայում նշել այն ոլորտները, որոնց ուղղությամբ կարելի է անել առաջին քայլերը, ինչպես նաև Վենետոյի նահանգապետի կողմից կնքված համաձայնագրի վավերացումից հետո, համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով, երկկողմ աշխատանքային խմբերի ստեղծումը: Այս առումով, մշակութային ոլորտում արդեն իսկ առկա համագործակցությանը զուգահեռ Արմավիրի մարզպետի ներկայացվեցին մի շարք նախաձեռնություններ և Արմավիրի մարզի փորձը, որը կարող է օգակար լինել իտալական կողմի համար, հատկապես գյուղմթերքների՝ բանջարեղենի, ծիրանի, խաղողի, գինու և կոնյակի արտադրությունը, որոնցում Հայաստանը և Արմավիրի մարզը կարողացել են հաջողություններ գրանցել: Կրթության առումով առանձնահատուկ հետաքրքրություն առաջացրեց Հայասատանի հանրակրթական դպրոցներում շախմատի դասավանդման փորձը: Հայկական պատվիրակության անդամ գործարարները փոխանակվեցին քարի վերամշակման արտադրամասի ներկայացուցիչների հետ իրենց տվյալներով և ձեռք բերեցին պայմանավորվածություն հետագա բանակցությունների վերաբերյալ: Հետագա համագործակցության նպատակով մարզ կայցելեն կահույքի արտադրությամբ զբաղվող հայ գործարարի ներկայացուցիչները:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Հետագա համագործակցության եղանակները, ձևը, ժամկետները, պատասխանատուներին որոշելու համար երկկողմ արձանագրություն կկազմվի աշխատանքային խմբեր ստեղծելու վերաբերյալ, որը կդառնա ստորագրված հուշագրի անբաժանելի մասը: Ակնկալվում է ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսության ոլորտի փորձի փոխանակում, ներդրումային ծրագրերի իրականացում, երկկողմ տուրիզմի զարգացում, կրթության ոլորտում փորձի փոխանակում:
10.	Գործուղվող՝	ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյան